

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՐԱԿ

Տարեկան դիմը 10 րուբլ, կես տարեկանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությամբ մեջ:
Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мир»

Խմբագրությունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):
Հայտարարութիւնները ընդունվում է ամեն լիզուով:
Հայտարարութիւնների համար վճարում են
խրատանայն րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մի նոր երեւթիւն: Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ներքին Լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «ՈՐՔԱՐԻՆ» լրագրի թղթակցութիւնը: Նամակ թիւրքալոյց: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ, Գաւիթ բէկ:

ՄԻ ՆՈՐ ԵՐԵՒԱՆԻ

Երէկ մեծ արտասովորութիւն «Մշակ» մէջ Կ. Պօլսի «Մանկութիւն» լրագրից մի յօդուած թիւրքաց հայերի սահմանադրութեան քան և մէկերորդ տարեգարծի տօնելու վրա:

Առաջին անգամ տեսնում ենք որ Կ. Պօլսի հայոց մամուլը սկսում է քննողական աչքով նայել այն երեւոյթի վրա, որին առաջ պոլսեցի հայը յանցանք էր համարում քննադատել:

«Մանկութիւն» լրագրի յօդուածը մի խիստ, անխնայ քննադատութիւն է թիւրքաց հայերի սահմանադրութիւնն առնելով երազական իրաւունքների, անողորմ քննադատութիւն է Կ. Պօլսի հայերի թեւ թեւաբար բնութարարութեան:

Դա բոլորովին նոր և մեր կարծիքով ուրախալի երեւոյթ է, որովհետեւ ոչինչ առաջագիմութիւն հնարաւոր չէ որ և է հասարակութեան մէջ առանց անձնաբնութեան: Բայց դարձեալ յօդուածը ունի մեծ պակասութիւններ. նա հիմնաւոր քննութիւն չէ, նա չէ բացատրում անմիջական երեւոյթի պատճառները, այլ մի քանի օրէնք է միայն, աւելի ոչինչ:

Կ. Պօլսի հայ մամուլը անընդունակ է

հասկանալ որ պոլսեցին այն պատճառով անտարբեր է դէպի ազգային գործերը, թեթեւամիտ է, ետական է, միմիայն իր անձնական նիւթական շահերի վրա մտածող է, որ նա Հայաստանից կտրված է, նա ոչինչ կապ չունի մայրենի հողի հետ, նա բիւզանդացի է, նա պատկանում է մի բուրժուազական հասարակութեանը, որ Բոսֆորի ափերում նստած՝ իր հարստանալու, կամ իր օրական հացի վրա է մտածում... Նրա առօրեայ, կենսական պահանջները համարաչափ չեն հայաստանցի հայի առօրեայ պահանջների հետ, որոնց հետ նա ծանօթ էլ չէ: Նրա ինչ գործն է, օրինակ, իր ծախսով պահել իր հիւանդանոցի մէջ Հայաստանից գաղթած մշակների որբ մանուկներին... Մի ուրիշ ազգութեան պատկանող պոլսեցու ինտելեկտները աւելի մօտ են պոլսեցի հային, քան թէ հայաստանցի հայի շահերը:

Գործընկերով փոխել այս կամ այն հասարակական երեւոյթ անհնարին է:

Երկուսից մին՝ կամ պետք է զրգուել Կ. Պօլսի հայերի շահասիրական զգացմունքը ազգային գործերի վերաբերութեամբ, կամ պետք է կատարելապէս անտես առնել Կ. Պօլսի, հայրենիքի վրա հղալու ժամանակ: Բայց այնու ամենայնիւ «Մանկութիւն» լրագրի յօդուածը մի նոր երեւոյթ է, առաջին քայլ է դէպի արդիւնաւոր ազգային անձնաբնութիւնը:

Մինչև այժմ Կ. Պօլսի մամուլը իր պոլսեցիների բոլոր պակասութիւնները արժաւորութեան տեղ էր ընդունում, չէր նախատում ոչ նրանց շահասիրութիւնը, ոչ նրանց անշարժութիւնը, ոչ նրանց յանցա-

ւոր անտարբերութիւնը: Նա ամեն բան լաւ էր գտնում Կ. Պօլսի և հայոց մամուլը կարծում էին որ մեծ գործ էին կատարում, մեծ ծառայութիւն էին անում ազգին և հայրենիքին, երբ միտախն հաւաքվելով կուշտ ուտելուց և լաւ խմելուց յետոյ, մի քանի հարիւր անգամ կը կանչէին, «կ'յցել ազգ, կ'յցել սահմանադրութիւն» և յետոյ կը ցրվէին իրանց տները, զոհ իրանց արած յիմարտ թիւնից:

Գոնէ այժմ, թէ և քարոզի ձեռով, լսվում են մամուլի մէջ ազդեալ ձայներ, որոնք սկսում են խստութեամբ քննադատել, ամօթի դրօշմով դատաւարտել այն ցնորական, խաբարայական և այլանդակ երեւոյթը, որ անուշովում է թիւրքիցի հայոց սահմանադրութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մտկվալում հրատարակվող «Փարոս» Հայաստանի պատկերազարդ շաբաթիկի երրորդ տետրակը (մայիս-յունիս) ստացված է թիֆլիսում:

Մեղեալ կիրակի օրը կ'եսորին Կ. Սարգսեանցը թիֆլիսի հայոց մշտական խմբի մասնակցութեամբ տուեց մանկական ներկայացում: Ներկայացրին «Կեղծ մաղեր» վոյբիլի: Գլխավոր դերերը խմբի լիւրէն էր մանուկներով: Այս օրը ենք համարում անգամ նկատել թէ որքան անտախտութիւն է այդ տեսակ անբարոյական պիէտների ներկայացման տանի 10—15 տարեկան երեխաներին: Յիշում ենք, որ զանազան չեն հետեւի թիֆլիսի այդ օրինակին:

Խմբագրութեան մէջ ստացած Կ. Ա. Քիշմիշեանցի «Բուսաբանութեան համալուծ» կրկնողական դատընթաց» գրքից, Նիւնի առեւերէն

—Ո՞վ է խնամում, կարելի է մի արգելք պատահած լինի:

Նրանք սկսեցին դարձեալ խմել, հանգստանալով այն մտքով, թէ իրանց սպասած մարդիկը եթէ ջրաղացի տակն էլ ընկնելու լինեն, ողջ կը դուրս գան:

Իսկ Սառան դուրս գալով մառանից, որտեղ նստած էին հիւրերը, քարեայ սանդուղքներով բարձրացաւ և մտաւ մի սենեակ, որ կացուցանում էր նրա քնարանը: Այստեղ պառկած էր նրա միակ դասակի՝ փոքրիկ Պետրոսը: Բարակ վերնաւոր ծածկում էր նրա երեսը: Մայրը յետ քաշել, որ չնկատուի իր ազատ լինելը: Սենեակի տաքութիւնից նա քրտնել էր, և կաթիլները մանրիկ ցողի նման պատել էին նրա շուշանի գոյն ձակաւոր և շառագունած, վարդագոյն թշուր: Մայրը խոհարարիկացաւ, համբուրեց նրան, այնքան զգուշութեամբ, որ երեխան ոչինչ չը զգաց: Յետոյ նստեց անկողնի մօտ և խորին տխրութեամբ նայում էր նրա երեսին: Ծոռտով խնդր կնոջ աչքերը լցվեցան արտասուքով: Ըսկոնց խուլ կիւղով լաց լինել: Այդ կնոյ, որ հաղարաւորներին սէր էր ծախել և ոչ մէկին չէր սիրել, — սիրում էր իր զաւակին, այն ջերմ և բընական սիրով, որ տուած է մայրերին միայն: Բայց ինչու էր լաց լինում նա:

Իբրեւ մէջ բնակվում էին յիսուհի չափ հայ ընտանիքներ, երբ լուր տարածվեցաւ, թէ Գաւիթ բէկի զօրքերը պիտի պաշարեն բերդը, հայերը կամեցան դուրս գալ այնտեղից: Աստուգ-կուլի խանը, բերդի տէրը, արդեւեց, ասելով, «Ձեզ պէտք է պահեմ իմ ձեռքիս մէջ, եթէ ձեզ հաւատարմեցնեմ կը պաշարեն իմ բերդը, այն ժամանակ ձեզ դուրսեցնելու օւղները փոխարեն թողանալու մէջ կը դնեմ և կը նետեմ դէպի

գրքիցի թարգմանութիւն է: Պ. Թարգմանողը խնդրում է այն անձանց, որոնք ձեռքի տակ աւելի լաւ և յաջող հայերէն տեքստներ ունեն, հաղորդել իրան, որով իրան միջոց կը տրվի ուղղել ազգ տեքստները ընդարձակ Բուսաբանութեան դասագրքում, որի տպագրութիւնը յանձն է առել թիֆլիսի տպագրական բնիկը: Թիւրք: Այս կէտի վրա դարձում ենք մեր մասնագէտների ուշադրութիւնը:

Ա.Լ.ԲԱՍՆԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են, «Քանի որ առաջ վերագրեցան այստեղ լքված մեծ քանակ երեք պատգամաւորներ, որոնք քաղաքի կողմից ընտրված և ուղարկված էին լքվածին և Ներսէս: Ա) Մոմախանութեան արդիւնքը հոհոտոր դպրոցին վերադարձնելու: Բ) Բնական պարոյի բացման մասին դարձեալ յիշեցնելու և խնդրելու: Գ) 5100 րուբլի գնաւորականաց կաշարանների համար որոշած հարկից քաղաքը ազատ կացուցանելու համար: Մոմախանութեան արդիւնքը քաղաքի ցանկութեան համաձայն հող: Իշխանութիւնը արդէն անօրինել է յօդուած յիշեալ ուսումնարանին: Իսկ միայնակ երկու կնիք հարցերի վերաբերութեամբ դեռ չէ կարելի մի դրական բան առել, ըստ դուռն պ. պ. պատգամաւորները իրանց գործողութեանց մասին դեռ ևս չեն տուել հաշիւ կամ բացատրութիւն թաղապետական ժողովի մէջ, որը կայանալու է ամսիցս 7-ին»:

Այս տարի մայիս ամսում եկած է Ալեքսանդրապոլ «Տատրիկ» ցիւրկը և բաւական լաւ խաղեր է տալիս: Զուգարծութիւններից դուրս Ժողովուրդը յաճախում է այնտեղ հանգիստ: Վերջին յունիսի 3-ին նշանակված խաղը տեղեց Սահակաւուչեան օրիորդաց դպրոցի օգտին էր:

Մեզ հաղորդում են Ս. ՊԵՏՐՈՐԻՒՄԻՅՈՒՆ, որ մի հարուստ ազգաւոր պարոն չուտով հիմնելու է մի ընկերութիւն՝ Հայաստանի անուանով, որի նպատակը պէտք է լինի նպատակը Հայաստանի ֆիզիքական, ժողովրդական և քաղաքական կազմութեան ուսումնարան: Ինչպէս չէ, այն պարոններին, որոնք կը կամենան Հայաստանի ճանապարհորդել գիտական ուսումնարանութեան համար: Նոյնպէս կը վարձարեն այն բոլոր աշխատութիւնները, որոնք Հայաստանի աշխարհագրութեան և իր երկրի մասին վերաբերում: Նոյնպէս հաղորդում են որ մի բաւականին մեծ գումար է նշանակված Հայաստանի անձնաժողովի ընկնիք քաղաքի պատրաստելու համար և այդ նպատակով դիմած են Ալեքսանդր:

Թշնամու բանակը: Պարսիկը պահել էր նրանց որպէս պատանդ, եթէ թշնամին չիղէր, պէտք է նրանց վրա թափել իր վրէժնորութեան թոյնը: Այդ պատճառով բոլորը մեծ երկուցով ըստ պատում էին իրանց տարափելի վախճանին: Այդ բոլորից յետոյ շատ հասկանալի էր, թէ ինչու էր լաց լինում Սառան: Գուցէ իր զաւակն ևս այն բազմաթիւ երեխաներից մէկը կը լինէր, որ պիտի մորթվէին բերդի փողոցների մէջ:

Նրան իր հոգեկան տխրութիւնից դուրս բերեց դուռն ձայնը, որ հաղու լսելի կերպով բաղնիցն էր: Նա վաղեց դէպի դուռը և իսկոյն բաց արեց: Ներս մտան չորս հոգի: Սառան նրանց տարաւ մառանը, ուր նստած էին առաջին հիւրերը: Նոյն բնիկներից մէկը կուգ տալիքն էր իր կրկնակի սպասարարով, միւսը նրա գեղեցիկագէտ աշակերտն էր, երրորդը հակադատիկ հիւան էր, իսկ չորրորդը՝ այն անձնութիւնը, որ բերդի դուռն միացաւ նրանց հետ և իրան խանի ֆէրբաշ էր կոչում:

Առաջինները, տեսնելով նորեկներին, սկզբում չփոթվեցան, խուսկութեամբ մէջ ընկան Բայց երբ սափրիչը մօտեցաւ առաջ, — Ողջոյն ձեզ, բոլորը ուրախութեամբ չըմբռնեցին և սկսեցին համբուրել նրա աջը, բացականչելով:

— Աստուած է վիշտ, տէր հայր, դժուարի տառանան էլ չէր կարող ճանաչել ձեզ, եթէ դուք ինքներդ ձեզ չը մասնակիք:

— Սափրիչը հալածորդի տէր: Աւետարան էր, Գաւիթ բէկի ամենաքաջ զօրապետներից մէկը:

— Նստեցէք, տէր հայր, ստեցին նրան: — Խուսկածը դեռ չէ սառել, ձեռք բաժինը պահել ենք:

— Օրհնեալ լինիք, որդիք, պատասխանեց քահանայ, — կը նստեմ, ի հարկէ, կը նստեմ: Թող առաջ այդ բաները վրայիցս արձակեմ, յետոյ կը

ԴԱՍԻԹ ԲԵԿ

ՊԱՏԱՐԱՎԱՆ Գ. Բ.

(1722—1728)

Ժ.Գ.

Չեմու բերդի մէջ, հայոց թաղի մի անկիւնում, ուղիղ ամրոցի պարսպի մօտ կանգնած էր մի քարաշէն տուն: Այնտեղ իր միակ փոքրիկ օրդու հետ ընտելվում էր մի այլի կին: Նրա ամուսին այլը ունէր սեպհական այգի, որի թիւնների պտուղներից արաղ էր քաշում, իսկ խաղողից գինի էր պատրաստում: Նա գինեւաճառ էր և նրա տունը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ գինեւաճառ: Ամուսնի մեռնելուց յետոյ նրա առեւտրը շարունակեց կնիք: Նա յայտնի էր ամբողջ բերդի մէջ որպէս լաւ արաղ քաշող և նրա պատրաստած գինիները ամենաբնական էին իրանց տեսակի մէջ:

Այդ կնիք կոչվում էր Սառա. նրա տարիքը անցել էին եռեսունից, բայց տակաւին թարմ էր մնացել և պահպանել էր իր երիտասարդութեան գեղեցկութիւնը: Սառան այն վարպետ կնիկներից մէկն էր, որ անդադար ընկնելուց և կանգնելուց յետոյ, նոր ճանաչում են կիւնքը, որ գիտեն, թէ այժմ ինչպէս պէտք է վարվել մարդկանցի: Տես: Նա իր յաճախորդների մէջ լաւ ընտրողութիւն անել գիտէր, երբեք թոյլ չէր տալիս, որ իր չը հաւանած գինի կամ արաղ դընդնեց իր տանը նստելիս կամ այնտեղ խմելիս, այլ պարտաւոր էին առնել և դուրս տանել: Դրա համար բախի մեծ դրան մէջ բացված էր

մի գոնակ, որտեղից նա յաճախորդներին փողը և դարձեալ ամանները ընդունում էր, և արագով կամ գինիով լցնելով, ճանապարհ էր դնում:

Երկրի սովորութիւնը արդարացում էր Սառայի վարմունքը: Սառան կին էր, բաւական գեղեցիկ կին, նրա տղամարդը մեռած էր և իր տանը օտար մարդիկ ընդունելը անպատշաճ էր նրա համար: Իսկ այդ գիշեր, ընդհակառակն, նրա տան ստորերկրեայ մառանում, ուր դրած էին գինու կարասները, ճրագ էր վառվում: Ընկնող հողի նստած էին այնտեղ խմում էին: Նրանց առջև դրած էր հաց և տաք խորովածը: Ինքը Սառան շամիլներով ներս էր բերում և բաժանում էր ընթրիքներին: Արդեաւ նրա ծառաները տանը չէին, թէ տանտիրուհին ցանկանում էր, որ իր հիւրերին ոչ ոք չը տեսնէ, և այդ պատճառով ինքն էր յանձն առել ծառայութիւնը, — յայտնի չէ: Միայն նա մի առանձին յարգանքով էր վերաբերվում դէպի իր հիւրերը, որոնց թէ դէմքերը և թէ հագուստը բաւական կատարածուր արտադրութիւն ունէին:

— Կէս գիշերից անցաւ, սասց հիւրերից մէկը:

— Գեռ ոչինչ ձայն չը կայ:

— Եթէ մի ձայն լինէր, իմ չուսն առաջինը կը լինէր, որ խաբարը մեզ կը տար, պատասխանեց տանտիրուհին: — Գուր ձեռք քաշեմ, ես իսկոյն կը բաց անեմ, երբ դուս թխեցը կը լսեմ: Նա դուրս գնաց: Երեւում էր, այդ մարդիկը անհամբերութեամբ սպասում էին ուրիշներին, որոնց ուշանալը նրանց անհանգստութիւն էր պատճառում: Մէկը ասաց:

— Չի լինի թէ մի վտանգի գտնաւած լինեն:

— Նրանք եթէ ջրաղացի տակն էլ գցես, ողջ կը դուրս գան, պատասխանեց միւսը:

— Ապա ինչու այդքան ուշացան:

ՆՈՒՆԻՈՒՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ արտերը այնքան առատ են, որ տեղացիները չը գիտեն թէ ինչպէս պէտք է հնձել. մինչև անգամ հեռաւոր կողմերից հնձողներին կանչում են ամենամեծ վարձով: Հացի ֆունտը 2½ կօպէկ է:

ՆՈՒՆԻՈՒՑ մեզ հաղորդում են, որ նորերում մէկ խումբ երիտասարդների մէջ քէֆանելու ժամանակ կռիւ է պատահում. նրանցից մէկը դաշտում սպանում է իւր հակառակորդին, որը Նուխում ֆէլդշերի պաշտօն է կատարելիս լինում:

ՆՈՒՆԻՈՒՑ հոգեւոր ուսումնարանը կապալաւ է սուլաւ թան տարուց ի վեր տէր Սիմէօն քահանային, ուստի ոչ ոք չէ համարձակում ոտք դնել այդ ուսումնարանում, բացի նրան ի մանկութենէ հասնել եղած տիրացու Համբարձումից: Ժողովուրդը նոյնպէս և Ղարաբաղի առաջնորդը փորձել են բերել իսկ ուսումնարանին համար մանկապարտ ուսուցիչներ, բայց այդպիսիք տէր հօր խորհրդակցութեամբ մինչև մէկ տարի այնպէս քշվել են ուսումնարանից, որ այժմ էլ ոչ ոք չէ համաձայնում Նուխում ուսուցչի պաշտօն վարել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳԻԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

„Порядокъ“ լրագրի մէջ տպւած է հեռեկալ թղթակցութիւնը: Նորերում իմ նամակներից մէկի մէջ եւս գարմանը յայտնեցի այն առիթով, թէ ո՞վ ո՞ւմից է օրինակ վերցնում: Մօսկւայի մեր փիլիսոփաները գերմանացիներից, թէ վերջինները առաջիններից: Այժմ եւս այլ եւս չեմ գտրմանում: „C'est du nord que nous vient la lumiere“, ասել է մի անգամ Վօլտեր, ցանկանալով շողորթել իրան հոփանաւորող եկատերին: Նա անիրաւացի էր. այն ժամանակ ոչ ոք չէր մտածում լոյսը հիւսիսից ստանալ և հիւսիսն էլ չէր ցոյց տալիս, որ կարող է լոյս տարածել: Բայց օրերը անցնում են և միմեանց չեն նմանում: Այժմ պառաւ Մօսկւան, որ վաղուց կամենում էր ամբողջ աշխարհին մի հնոր խօսք՝ ասել, սկսեց վերջապէս գործել, յայտնելով այդ գաղտնի խօսքը, իսկ արտասահման ուշադիր ունիւղիւններ և հեռոււորներ գտաւ: Գերմանացիները, ինչպէս երբեւում է, ի նկատի են առնում Մօսկւայից երեւող լոյսը:

Կարողացէ՛ք բերլինում նորերում հրա-

տարակիւմ մի ազգարարութիւն և դուք իր համոզվէք, որ նա ամբողջապէս արտատպւած է „Русъ“ լրագրից հօր Գերմանիայի մայրաքաղաքի բնակիչների համար: „Ազատամիտները, ասված է այդ ազգարարութիւնի մէջ, մեծ խոստովներ տուն, բայց նրանք հայրենիքին միայն կորուստ պատճառեցին: Այլիսներակն ընկերութիւնների մասին օրէնքը ոչնչացրեց ժողովրդի բարօրութիւնը: Արհեստների ազատութիւնը արհեստարարներին համբաւեցրեց, իսկ անհամեմատ մրցումն անկարելի դարձրեց կանոնաւոր և զրական գործավարութիւնը: Տեղափոխութեան ազատութիւնը քաղաքների մէջ մարդկերանց ահադին քանակութիւն կենտրոնացրեց, իսկ դրանից նրանք թափառական են դառնում և աղքատութիւնից հաղարնելով ոչնչանում են: Առեւտրի անպայման ազատութիւնը չափազանց փնտցեց մեր արդիւնաբերութիւնը: Ուրեմն թող կորչի առեւտ ազատութիւնը և առեւտ ազատութիւնը: Մեր պրօգրամն է. կառավարական հօր իշխանութիւն, պահպանելով քաղաքային ազատութիւնը և անձնական անկախութիւնը: Ժողովրդին ամենից առաջ կրօն է հարկաւոր և այդ պատճառով մենք պահանջում ենք կրօնական ուսումնարանների վերականգնելը և բողոքում ենք այն բանի դէմ, որ մեր քրիստոնեայ ուսումնարանների մէջ օտարահաւատ ուսուցիչները մի բան գաս տան (մինչև անգամ թուաբանութիւն և Ֆիլիկա): Մենք բողոքում ենք նոյնպէս և այն բանի դէմ, որ ոչ-քրիստոնեաները դատաւոր են նշանակում և քրիստոնեական երգում են անել տալիս: Տնտեսական հարցերի վերաբերութեամբ մենք կատարելապէս կը պաշտպանենք այն բողոքը, ինչ որ կը կամենայ պետական կանցլերը:“

Բացի այդ, ազգարարութեան մէջ շատ բան կայ, որ եւս աւելորդ եմ համարում առաջ բերել: Այդ ազգարարութիւնը ստորագրված է մի քանի աստիճանաւորներից, արհեստարարներից և երկու քահանաներից: Սովորութեան համեմատ այդ ազգարարու-

թիւնը բաժանում է ժողովրդին: Սա էլ ընտրողական ցոյցի մի ձև է: Բայց սա դեռ քիչ է: Բերլինը կամենում է Մօսկւայից առաջ անցնել իւր գործիչներով: Ամենից առաջ պէտք է յիշել պալատական քարոզիչ Շտէօկերին, որի գործունէութիւնը այդքան „օգուտներ“ տուեց Գերմանիային: Հրէաներին հայածելը չէ բաւականացնում նրա գործունէութեանը և այժմ նա հայածանք է սկսել ազատամիտ օրէնսդրութեան և զիտութեան դէմ: Նա ինքը և նրա կուսակիցները արշաւանք են սկսել պարտադիր քաղաքական ամուսնութեան դէմ, համոզում են ազգաբնակչութեանը կրօնական ուսումնարանների վերականգնելը խնդրել կառավարութենից և վերջապէս կառավարական շրջանների մէջ աշխատում են, որ արգելի քրիստոնէութեան, Գրիստոսի կեանքի և առհասարակ եկեղեցւոյ վերաբերել: Հարցերի ազատ և զիտական քննութիւնը: Այսպիսի ցոյցեր վաղուց են կատարվում և նրանք մասամբ աջողվել են: Նրանց դեռ չէ աջողվել ազատ գիտութիւնը եկեղեցական յենդուրային ենթարկել, բայց դատախազութեան ազատութիւնը պրոեսական համալսարանների մէջ սահմանափակված է: Այժմ նրանք ձեռնառնել են եղել միւս համալսարաններին: Նրանց նպատակն է և կեղեցական պատմութեան պրօֆէսորներին ենթարկել հոգեորականութեան հսկողութեանը, ասելով, թէ առանց այդ հսկողութեան այնպիսի տեղեկութիւններ են տուրածվում, որոնք փնտցում են կրօնական համոզմունքներ և եկեղեցական կանոններին: Նոյն բանի վրա հիմնվելով, նրանք պահանջում են, որ ժողովրդական ուսումնարանները հոգեորականներին յանձնվեն և որ եկեղեցին պետութենից անկախ յայտնվի: Եւ այդ բողոքը կատարվում է մի „կուրսուրական երկրի մէջ“, որտեղ 15 միլիոն բնակիչներ իրաւունք չունեն ազատ աղօթութիւն և հաղորդութիւն ընդունել մահուան անկողնի վրա, եկեղեցին պետութեանը ենթարկելու պատճառով: Շտէօկեր ձգտում է բողոքական եկեղեցին քաղաքական մարմին դարձնել:

Պէտք չէ մտածել, որ այսպիսի ցոյցեր կատարում է միայն Շտէօկերի կուսակցութիւնը (այդ գործին չեն մասնակցում գերմանական հոգեորականներից շատերը և ընտանաբար են վերաբերվում պալատական քարոզչի յետադիմական փորձերին), ընդհանրապէս, նա պաշտպանված է արխիեպիսկոպական հօր կուսակցութենից, որ աշխատում է իւր կողմը դարձնել կենտրոնականների վերջին ժամանակներում հրատարակված եկեղեցական օրէնքները փոխելու համար: Այդ պարունները կազմել են „սօցիալական վերանորոգութիւնների քրիստոնեայ պահպանողական“ ընկերութիւն, որ նորերում առաջին նիստ ունեցաւ: Ընկերութեան նիստերի սկսվելուց առաջ նրա նախագահը մի բրօշուր հրատարակեց, որից և առաջ կը բերեմ զխաւոր կէտերը, որպէս զի դուք կարողանաք զաղափար ստանալ այդ պահպանողական կուսակցութեան հոգու մասին: „Մարտի 1-ի սարսափելի անցքը ապացուցեց, թէ հիւսնդութիւնը որքան խորը արմատներ է գցել ժամանակակից հասարակութեան մէջ: Այդ հիւսնդութեան դէմ միակ միջոցը եռանդոտ ստիպողական միջոցներն են, բայց դրանք բաւական չեն, այլ պէտք է հիւսնդութեան արմատը գտնել նրա վրա ազդեցութեան արմատը գտնել նրա վրա ազդեցութեան համար: Ընդհանուր կարծիքն է, որ այդ չարիքի արմատը տնտեսական պատճառներն են: Ի հարկէ նրանք էլ ազդում են, բայց միայն մասամբ: Անհաւատութեան գլխաւոր արմատը հասարակական գիտութեան մասնաւոր մասնաւոր ազատութիւնն է և իշխանութեան թուլութիւնը: Զարկը սկսվեց տարածվել Ֆրանսիական էնցիկլօպիդիստների երեւուլուն պէս, որոնք անհաւատութիւն էին քարոզում: Նա աւելի էլ տարածվեցաւ 1789 թուականի մեծ յեղափոխութենից յետոյ, որ տարածեց ընդհանուր հաւատարմութեան սուտ և անբարոյականացնող սկզբունքը:— Այդ չարիքը աւելի էլ զարգացաւ գերմանական փիլիսոփայութեան շնորհիւ, որին տարաբաղաբար թոյլ էր տուած գիտական հետազոտութիւններ աւելի, բայց որ ընդհանուր գիտական

նստեմ: Եւ նա սկսեց արձակել սափրիչի բոլոր պարագայք, որ իւր վրա կրած ունէր, սկսեց քանդել թէ կուրծքի և թէ մէջքի սապատները, որ արհեստական կերպով կազմել էր:

Այդ միջոցին առաջիններից մէկը մօտեցաւ սափրիչի գեղեցկապէմ աշակերտին, որը մի կողմում կանգնած էր, տեսնելու համար, արդեօք իրան կը ճանաչեն, թէ ոչ:

—Այո, խորէն հայր ուրբ, գոչեց նա ծիծաղելով.—ծծափախ, եւ քեզ ճանաչել չէի կարող, եթէ պարանոցիդ վրայի սպին չը տեսնէի:

Խորէն հայր սուրբը Տաթևի երկտասարդ արեւդաներից մէկն էր: Նրան առաջին անգամ մենք տեսանք յիշմամբս ընդհանրապէս հագուստով երբ վիճակից հաւաքած հոգեւոր պատուի: Եւ նուրով ուղղված թիւրք էր տեղափոխում վանքը: Այժմ սափրիչի աշակերտի հագուստի մէջ բոլորովին անճանաչելի էր դարձել:

Նորերների երբորը ընկերը՝ հիւսն իսկոյն ճանաչվեցաւ. նրա հակայատուկ կազմութեանը, դէմքի խոշոր գծագրութիւնը ոչ մի կեղծի առկա չէին: Եւ նրան կարող ու պիտի հարկաւոր տեսնել էր նրան, միւսանցամ տեսնելիս կարող էր ճանաչել: Դա Ստեփաննոս Դաւիթեանն էր, Դաւիթ-բէկի սիրելին:

—Ինչո՞ւն, ասաց նրան առաջիններից մէկը.—քո այդ սղոցները, ուրաղները հազիւ թէ կարող են քեզ բանւոր մարդու տեղ դնել:

—Ի հարկէ, նրանց մօտ, որոնք ինձ ճանաչում են, պատասխանեց ինչո՞ւն. ցած դնելով իւր խօրվինը, որ լցված էր ստաղձագործի գործիքներով:

Զորբորը, որ իրան բերդի տէր խանի ֆէրաշ էր կոչում, հալիճարդի Մէլք-Փարսադանի սրդի Բայի զօրավարն էր, մի չափազանց հնարադէտ

և ճարպիկ երիտասարդ, որ ստատայի նման ամեն կերպարանքի մէջ կարող էր մտնել:

Մտաւոր մէջ գտնվող առաջին հիւսնը տեղացի հայերիցն էին, որոնցից մէկը բերդաբնակ հայոց ամուսնուհին էր:

Երբ բողոքը նստեցին, ներս մտաւ Ստեփան, բերելով իւր հետ մի մեծ լազան և իրրիդի մէջ սառը ջուր, որ նոր եկած ճանապարհորդները լուացվեն, կազդուրվեն և սկսեն ընթրիք ուտել: Նրա երեսը ծածկող սպիտակ քօղի միջից երեւում էին գեղեցիկ աչքերը և յօնքերը միայն: Այդքանը եւ բաւական ազդու նմուշ էր նրա դէմքի: Նրա պոքայները արտայայտելու համար:

(Ընթրիքից յետոյ տէր-Աւետիքը դարձաւ դէպի առաջինները, հարցնելով.

—Հիմա պատմեցէք, թէ գործերը ինչ գրութեան մէջ են:

Տաճարները պատասխանեց, որ բերդի բոլոր նշանաւոր դիրքերը ամրացած են. տեղային մահմեդականները զինված են, մինչև վերջին չունէ պիտի պաշտպանվեն. թշնամի թնդանութիւնը ունի, բայց բէկի զօրքերը չունեն, այդ պատճառով բերդը գրաւելը շատ դժուար պիտի լինի, եթէ ներսից չը մտնուի:

—Մենք նրանց թնդանութիւնը հէնց իրանց դէմ կը գործանենք, ասաց տէր Աւետիքը մի այնպիսի վտառութեամբ, որ նրան միայն յատուկ էր:—Դու այն ասեմ, այստեղի հայերը կարող են փոքր ի շատեղ օգնել մեզ:

—Այսօր էլ են, եթէ զենք ունենային, ասաց տաճարները.—բայց այն բոլորից, որ խանը լսեց, բէկի արշաւանքը դէպի իւր բերդը, բոլոր հայերի զենքերը խնց: Այդ բաւական չէ, նա պատշաճաւ ամենին կատարել, երբ բէկը կը պատրէ իւր բերդը: Եւ այդ կը կատարէ նա. այժմ ամեն

տեղ խօսվում էր, թէ խանը պատգամաւոր կուղարկէ բէկի մօտ, յայտնելու, եթէ չը հեռանայ իւր բերդից, նրա միջի հայերին կը կոտորէ:

—Կա խնայ յիմար մտածութիւն է, մէջ մըտաւ: Ստեփաննոս Դաւիթեանը.—եթէ տաճարայր հայեր կոտորվէին, բէկը դարձեալ ոչնչի տեղ կը դնէր և կը յարձակվէր բերդի վրա: Նրա համար ոչինչ նշանակութիւն չունի կորցնել մի յիսուն ընտանիքի կեանքը, երբ դրանով կարող էր ազատել շատերին: Բայց եւս հաւատացած եմ, որ ոչ մէկին փնտ չի հասնի, եթէ մենք գործը խոսնամ կերպով կը տանենք...

Այդ խօսակցութեան միջոցին ոչ ոք չը տեսաւ, որ խորէն հայր սուրբը աննկատելի կերպով դուրս եկաւ ստորերկրիայ մասանից, սրի դրանը Ստեփան, խաւարի մէջ կանգնած, սպասում էր: Մանկահասակ կինը բռնեց նրա ձեռքից և տարաւ իւր քնարանը: Այստեղ պառկած էր նրա զաւակը՝ փոքրիկ Պետրոսը: Արեղան առանց մօր վրա մի առանձին ուշադրութիւն դարձնելու, վեր առեց ճրագը, լուսութեամբ մօտեցաւ քնած մանուկին և խօրին զգացմունքով սկսեց նայել նրա վրա: Երիտասարդ վառականի սիրտը բաբախում էր, նրա ամուր ծնկները դողդողում էին, և փոքր էր մնում, որ ճրագը նրա ձեռքից պիտի վայր ընկնէր, գեղեցիկ երեխային տեսնելու ժամանակ: Այդ միջոցին երեխան իւր փոքրիկ թաթիկը բարձրացնելով, շարժեց երեսի վրա, կարծես թէ, այնտեղից մի ձանձ էր քշում: Այդ գործողութիւնը աչքաւոր սրտաշարժ էր, որ արեղան այլ եւս իրան պահել չը կարողացաւ, խոնարհվեցաւ քնած երեխայի վրա, և բռնելով նրա թաթիկը, սեղմեց իւր շրթունքին: «Ո՛րքան նման է... այդ միտքը անցաւ նրա վրդովմունքով ի սրտից: Եւ անգամ մի անգամ միտքը...

Երեխայի մայրը անշարժ կանգնած էր հեռու, որպէս մի քարացած արձան: Նրա գունատված, անհանգիստ դէմքը կրօն էր իւր վրա ամօթի և խղճահարութեան բոլոր նշանները: Երբ արեղան, ճրագը մի կողմ դնելով, նստեց փոքրիկ մանուկի անկողնի մօտ, երեխայի մայրը արտասուք աչքերով մօտեցաւ, և չուղեւով արեղայի առջև, նրա աջը բռնեց իւր սառն ափի մէջ, ասաց դողողով.— ճանախ:

—Դու ինձ հետ չես խօսում, երեւում է, դեռ չես ներել ինձ: դեռ առաջվայ նման բարկացած ես ինձ վրա: Խորէն, նայելով, ու ի խօսում քեզ հետ,—այն կինը, որին մի ժամանակ սիրում էիր դու, որին յետոյ ատեցիր: Քո առջև չուրած է նա, այն թշուառը, որ նոյնպէս սիրում էր քեզ, երբ մի ժառուր և սնարատ աղջիկ էր: Քո առջև չուրած է նա, որպէս մի յանցաւոր, որ ոչինչով չէ կարող քաւել իւր մեղքը, եթէ դու չը ներես նրան: Խորէն, եւ դաւաճանեցի քեզ, եւ ձգեցի քեզ և իմ սէրը տուեցի օտարին, որը յետոյ իմ անբախտ ամուսնից դարձաւ: Այն, անբախտ, որովհետեւ եւս նրան գերեզման ուղարկեցի, որ աւելի ազատ լինեմ, որ աւելի անարգել կերպով կարողանամ մի տղամարդի գրկից միւսի գիրկը ընկնել: Եւ հասաւ իմ նպատակին: Ինձ այնուհետեւ ոչինչ չէր արգելում, ոչ ամօթը, ոչ ամուսնից, եւս ինձ հաւատարկաց կարծիքը: Անուշաւորութիւնը իմ մէջ այն ստոյգան գործակել էր, որ ոչինչ գողցել չէր կարող ինձ: Այլ ջուր խոր մեղ մարդու նման, որքան խնամ էի, այնքան աւելի ստատկանում էր ծարաւս: Եւ ընկալ, օրըստօր ընկալ, որքան կարող էր ընկնել մի թեթեւամտ, յիմար կին: Եւ այժմ անարժան եմ քեզ: Իմ հպարտութիւնն անգամ կարող է պղծել քեզ: Եւ ամենին չեմ պահանջում վե-

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

2ր նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գնելով կը ծախվին.
ԿՈՆԳՈ-ԹԷՅ 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 Կ. Կ. Կ. շատ Լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիանալի **ԿԱՅՍԱՍԻ** 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** ԹԷՅ 2 ր. առանց թղթի: Անգլիական Բէլգիական 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խաւովի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵ-ՐԸ**, Զօնաօրի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրիսի **ԳՐԻՉՆԵՐԸ** և Էկատարին Կախա- շօխարի ծախելու համար, որոնք Գարիգի հանդիսի ժամանակ ոսկէ մեզալ ստացան:
ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ. և ամենալաւ 2 ր. 30 Կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խաւովի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., Կօնֆիւրներ հազի դէմ 60 Կ. Ֆոնար:

88—100

ՐՈՍՏՈՎ ԴՕՆԻՎԱՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՐԻՄԱՐԱՆՔԻ ՆԵՐ ԵՄ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՎԻ յայտնում է հե- տեւեալը. Իմ ծխախոտի արգիւնաբերու- թեան մեծ պահանջը դրոշմ Թիֆլիսի գոր- ծարանատէր Պիրալով և ընկ. և Գալի- զօվին նմանակել իմ արգիւնաբերութեան ձե- լին զանազան անուններով, մանաւանդ «ԼՕ- ՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ», «ԳԵՆԵՐՈՎ ԳԵՏԱՆ» և «ԳԵՆԵՐՈՎ ՍԿՈՐՈՒՆԵՎ»: Նախագիտւածներով իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ ուղարկել ինչ որ քանակութեան հաւանութիւն 1865 թուականի Մօսկվայի հանդէսից, 2) Ոսկեայ մեզալ Մօսկվայի տեխնիկական հանդէսից 1872 թ., 3) Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիեննայի աշխարհահանգից, 4) մեծ մեզալ 1876 թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհահանգ- տից, 5) Արծաթէ մեծ մեզալ 1878 թ. Փարիզի աշխարհահանգից, իսկ այդ նշան- ները չունեցող արգիւնաբերութիւնը ԽՆԻ- ՐԵՄ ԿԵԼՎԵ ԶԱՄԱՐՆԵՎ: ՄԱԿԵԿՕՆԻՍԻՅՑ ՆՈ- ՐԵՐԵՐԵՄ ՍՏՈՐԱՅ ամենալաւ ՀՈՏԱԼԷՏ ԾԻՍ- ԻՈՅ: Լաւ յատկութեան ծխախոտ սիրող- ներին խնդրեմ գիտել Թիֆլիսի մէջ. Սպի- ռիդօն Իվանովիչ Պօպովին, Բամազովին, Բայանդուրովին, Միկիլայովին, Բէժանօ- վին, Տէր-Գրիգորիանց և ընկ. և դէպօն, որ զանախում է Գօլովինսկի փողոցի վրա, իշխան Բազարտօն-Մուխրանսու տանը: ԱՅԴ ԱՆ- ՁԻՆՔ ՈՒՂԱԿԻ ԻՄ ԳՐԻՄԱՐԱՆՔԻ ՆԵՐ ՍՏԱՆՈՒՄ ԾԻՍԻՈՅԸ:

Բոստօլի 1-ն գրիլիայի վաճառական և ծխախոտի գործարանատէր ԵՄԱՌՎ ՍԵՄԵՆ- ՆՕՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԵՎԻ:

2—12

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՅ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՖԻԻ

Տպած մաքուր թղթի վրա, գրեք բաղ- կանում 400 Լրիսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրախաւառնոցում», «Կովկասեան գրա- վաճառանոցում» և Գ. Զաքարիա Գրիգորեան- ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար- ջեանցի, Հովհաննիսի ծխախոտի մագազին- ներում:

Գինն է 1 րուր 20 Կոպ.

Въ Редакціи газеты «МПАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Un professeur de français, connais- sant parfaitement le français, le latin, le grec (dix ans de professorat), pren- drait répétitions ou bien pourrait pren- dre préceptorat ou leçons pour con- versation française et perfection de la langue. Pourrait se charger de faire faire les cours de gymnase à des en- fants qui parleraient déjà le français. S'adresser à la rédaction du journal arménien le „Mechak“.

2—5

144 Արծրունու զաւերէա 144 ամենալաւն պահեստ մերելի և հայելիների:

Հրատարակութեամբ Նիւրիսի Սիմէօնե- անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Շրէքերի «Տնային բժշկական մարմնամարզութեան» գրքը: Գրքի հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արմոց և կանանց համար: Գինն է 40 Կոպ. ծախ- վում է «Կենտրոնական և Կովկասեան գրա- վաճառանոցներում, Նոյնպէս և պ. Մ. Վար- դանեանցի մօտ. Тройцкій пер. типо- графія Вартањанца, въ Тифлисѣ.

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով ի լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրու- թեամբ «Ծաղկաբաղ ձայնագրեայ երգա- րան» ուստի խնդրում եմ ձայնագրագէտ- ներին և այն պարոններին, որոց մօտ գը- տանվում են ազգային երգեր թէ հայկա- կան և թէ եւրօպական ձայնագրութեամբ (նօտաներով) բարեհաճել մինչև յառաջա- կայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր ուղարկողների ազգանունները կը տպա- գրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ էլ ձրիպպէս կը ստանան: Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պո- մանները յայտնել: Իմ հասցէն: Տիֆլիս, Եղ- նիկ քահանայի երգչիկանց:

9—10

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկա փողոցի անկիւնում ՄԻ- ՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼԱՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղաբանք կարող են գիտել այս հասցէով. Тифлисѣ, Михаилу Н. Теръ-Никогосову.

16—150

Արդէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին ՐԱՅՖԻԻ «ԽԵՆԹԸ» անու- նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք գիտել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յախթեանցի տպարանը: ԲԱԳՈՒՄ Կ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՉ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին. Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунѣца АБѢЛУ АП- РѢСЯНЦУ.

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍՏՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար- ձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՍԱ- ՅՈՎ ուղարկած 2 ր. 49 Կոպ. ԱՆԳԻԼԱԿԱՆ խաւովի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԵՆԱՅԻ ԻԻՂ, մազերը ամրացնող հա- մար, 1 ր. ամանը վրձին դիւա- ցաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ- ՊՕՆ և հոտաւէտ ջրի և այլն:

77—100

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ				Վ Ե Լ Ի Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ			
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր. 5 Կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ր. 30 Կ.	—	—	—	—
—	1 ր. 10 Կ.	—	—	—	—	—	—
—	1 ր. 20 Կ.	—	—	—	—	—	—
—	1 ր. 40 Կ.	—	—	—	—	—	—
—	1 ր. 60 Կ.	—	—	—	—	—	—
—	1 ր. 80 Կ.	—	—	—	—	—	—
Ամենալաւը	2 ր. —	—	—	—	—	—	—

89—100

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննու- թիւները
Մայիսի 22 և 23-ին Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
25-ից—30-ը Հաւաքարի Մարիամեան օր. ուսումն.
28 և 29-ին Կուկիւ թանգուլեան օր. ուսումն.
30-ին Հաւաքարի Ս. Մինաս եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին Կուկիւ Ս. Աստուածածին եկ. ուսումն.
3 և 4-ին Ջգրաշէն եկ. ուսումնարաններում.
5-ին Շամբուեցոյ եկ. ուսումնարանում.
6-ին Ձորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
9-ին Չուգուրէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.
Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

ԱՄԱՐԱՆՈՑՆԵՐ

Տիֆլիսից, — մօտ 8 վերստ հեռաւորու- թեամբ, — ԶԱՔԱՐԱՇԵՆՈՒՄ, Բոլոր Լիւրջի մօտ, — վրաց Խուլթիբայի կէս ճանապարհի վե- րայ տրվում են վարձով երկու ԱՄԱՐԱՆՈՑ- ներ, խաւաքանչիւրը՝ երեք սենեակից բաղ- կացած իւրեանց առանձին խոհանոցներով: Գնի մասին կարելի է հարցնել տիրօջը— Զաք. Գրիգորեանցին — նորա գրախաւու- թումը:

7—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ԲԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մարաբա- ներ, Կօնֆիւրներ, ԿԱԿԱՍ, բրինձ, Ա- ՄԱՆԵՂԷՆ, բօկախեր, թաւեր, երես լուա- նալու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судак), մատուցարան- ներ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գգախեր, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիւներ, տետրակ- ներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԵՂՈՂԱԿՆԵՐ, այրած ներ, ՄԱՀԱԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍ, տրիկօ, պա- րուսին, թաշկինակներ, երեսքիւններ, կիւտե- կա, գուրաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՑՆ, խե- րես, կօնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու- թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԳԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլոր կարելի է գտնել ԱՆԳԻԼԱԿԱՆ ԽԱՎՈՒԹԻ ՄԷՉ: Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մա- գնեցիկա, ԽՆԴ ԾԱՐԱԻՒՄ դէմ, ԽԵՆԱՅԻ գի- ջի ջրամի դէմ, կարթուրեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ փաթեթիկո- տի համար, պարկական փօշի: 12—100

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ—ՀԵ- ԲԻԱԹՆԵՐ. ԺՈՂ. ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ. ԱՌԱՄ- ՆԵՐ. ԱՆԵԾՔՆԵՐ. ԵՐԴՈՒՄՆԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿ- ՆԵՐ, Էայլն, ուղարկող պարոններին խնդ- րում եմ այսուհետեւ ինձ հետեւալ հաա- ցէով գիտել.

Вагаршапатъ. Туграну Навасартмянгу, Տ. Նաւասարդեանց.

3—6

ՄԵԺԵՎՈՒ ԻՆԺԵՆԵՐ ՍԷՐ- ԳԷՅ ԻՎԱՆՆՕՎԻՉ ԲԱԳԱՏՈՒ- ՐՈՎ ընդունում է. կազմել ՅԱՏԱԿԱԳԵՐ (պլաններ), գծագրներ, պրօֆիլներ, կա- տարում է կալուածների, հողերի և ան- տառների բաժանումն գնահատողական գիտական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարթա- չափութիւններ (нивелировка) ԲԱԺԱՆՈՒՄ Է ԱՆՏԱՌԱՆԵՐԸ կանոնաւորապէս գործածե- լու համար, գնահատում է հողերը, ԽՈՐ- ՀՈՒՐԴՆԵՐ Է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գոր- ծերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանա- կան, տեխնիկական և տնտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հա- լատարմատար լինել կալուածական և եր- կրաչափական գործերի համար: ՀԱՍՏԷՆ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ թողնել «ՄԵՎԱԻ» խմբա- րատանը:

9—10